# Տեղական Լուրեր

## Պայքարի տօնին առթիւ մուհաֆըզին ընդունելութեան ժամերը

Պայքարի տօնին առթիւ, Հալէպի մուհաֆըզը, Սէրայի իր գրասենեակին մէջ պայքարի առաջին օրը պիտի ընդունի շնորհաւորութիւնները հետեւեալ ժամերուն.

Ժամը

9ին Նախկին վարչապետները, նախարարները մուհաֆըզները եւ ընդհանուր տնօրէններ։

9.52 Մուհաֆազայի բարձրաստիճան պաշտօնեաները։

9.10 Զինուորական կազմը։

9.15 Կրօնական պետերը։

9.20 Քաղաքապետարանի եւ Էվգաֆի խորհուրդի անդամները։

9.25 Առեւտրական, ճարտարարուեստական եւ երկրագործական գրասենեակներու անդամները, դրամատանց տնօրէնները, բժիշկներու, երկրաչափներու, դեղագործներու, ատամնաբոյժերու եւ դայեակներու սէնտիքաներու անդամները եւ փաստաբաններու կաճառի անդամները,

9.30 Մամուլի ներկայացուցիչները։

9.34 Ազգայնացուած ընկերութիւններու պաշտօնեաները, ակումբներու եւ միութիւններու ներկայացուցիչները։

9.40 Աշխատաւորներու սէնտիքաներու վարչութիւնը եւ գործաւորները։

9.45 Միացեալ շնորհաւորողները։


ՖՈՒԹՊՈԼԻ
ՄԵԾ ՄՐՑՈՒՄ

«ՇԸՐԹԱԹ ԷԼ ՃԷՅՇ»

ԸՆԴԴԷՄ

«ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ»Ի

(ՀԱԼԷՊԻ ԱԽՈՅԵԱՆ)

Հովանաւորութեամբ՝
Հիւսիսային Սուրիոյ բանակի հրամանատար,
ԶՕՐ. ՕՄԱՐ ԽԱՆ ՔԱՍԷՄԻ

Կիրակի 23 Օգոստոս 1953, կէսօրէ ետք ժամը 4ին, Քաղաքապետարանի դաշտին վրայ։

Կարդացէ՛ք ՍՈՒՐԻԱ օրաթերթը


Փարուն էր։

## Արիւնալի ցոյցեր Պէյրութի մէջ երեսփոխան Էլ Հաճի ձերբակալումին առթիւ

## Ցուցարարները փակել տուին քաղաքը եւ բախում ունեցան ապահովութեան ուժերու հետ

ՊԷՅՐՈՒԹ.— Պէյրութի յանդուգն եւ խիզախ երեսփոխան, Ապտուլլա Էլ Հաճ մամուլի ներկայացուցիչներուն միջոցաւ ժողովուրդը հրաւիրած էր չվճարել պահակատուրքը, նկատի ունենալով որ երկրին մէջ կանոնաւոր հսկողութիւն չկայ տուներու եւ խանութներու վրայ։

Կառավարութիւնը այս յայտարարութիւնը ըմբոստացում մը նկատած ըլլալով, զայն ձերբակալելու հրամանագիր մը ստորագրած էր։ Սակայն երեսփոխանը «փիժամայով» յաջողած էր փախչիլ եւ յաջորդ օր Խորհրդարան ապաստանեցաւ, ժողովրդային մեծ ցոյցի մը գլուխը անցած։

Սակայն երեկոյեան ոստիկանութիւնը ձերբակալեց երեսփոխանը, որուն վրայ ժողովուրդը զայրանալով, բանուորին ու աղքատին պաշտպան հանդիսացող երեսփոխան Հաճի դէմ եղած այս արարքին, հսկայ ցոյց մը կազմակերպեց, եւ յարձակելով վաճառատուներու վրայ կոտրեց զանոնք, ինչպէս նաեւ կոտրեց պաշտօնական կեդրոնավայրերը, Պուրճի, Պասթայի, Ջէյթունիէի եւ այլ թաղերու մէջ։

Քաղաքը ամբողջութեամբ փակուեցաւ, որուն հետեւանքով փոխհարուածներ տեղի ունեցան ժողովուրդին եւ ապահովութեան ուժերուն միջեւ, ուր մեծ թիւով վիրաւորներ ինկան։

## Պայքարի տօնին առթիւ Քաղաքապետարանի ընդունելութիւնները

Հալէպի քաղաքապետը, պայքարի տօնին առթիւ, Քաղաքապետարանի մէջ շնորհաւորութիւնները կ՚ընդունի հետեւեալ ժամերուն.—

9.10ին Նախկին վարչապետները, նախարարները, մուհաֆըզները եւ ընդհանուր տնօրէնները։

9.15 Մուհաֆազայի եւ քաղաքապետարանի բարձրաստիճան պաշտօնեաները ու բարձրաստիճան սպաները։

9.20 Զինուորական կազմը։

9.25 Կրօնական պետերը։

9.30 Քաղաքապետարանի եւ Էվգաֆի անդամները։

9.35 Առեւտրական, ճարտարարուեստական եւ Երկրագործական գրասենեակներու անդամները, դրամատանց տնօրէնները, բժիշկներու, երկրաչափներու, դեղագործներու, ատամնաբոյժերու եւ դայեակներու սէնտիքաներու անդամները եւ փաստաբաններու կաճառի անդամները։

9.45 Մամուլի ներկայացուցիչները։

9.50 Ազգայնացուած ընկերութիւններու պաշտօնեաները, ակումբներու եւ միութիւններու ներկայացուցիչները։

9.55 Աշխատաւորներու սէնտիքաներու վարչութիւնը եւ գործաւորները։

10 Միացեալ շնորհաւորողները։


Սինեմա Հալէպ

Երկ. 17 Օգոս. էն սկսեալ կը ցուցադրէ գունաւոր, արկածախնդրական եւ սիրային ժապաւէնը




ՍԱՀԱՐԱՅԻ ՀԵՐՈՍԸ

Խաղարկութեամբ՝ ՄԸՐԷՆ ՕՀԱՐԱՅԻ եւ ՃԷՖ ՉԷՆՏԼԸՐԻ

ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑՈՒՄ

«Շըրթաթ Էլ Ճէյշ»

ԸՆԴԴԷՄ

Հ. Մ. Ը. Մ.ի

Ուրբաթ, 21 Օգոստոս 1953, կէսօրէ վերջ ժամը 4ին Քաղաքապետարանի դաշտին վրայ։


## ՍԱԿԱՐԱՆ

ԹՂԹԱԴՐԱՄ

| | |
|---|---|
| Տոլար | 357 |
| Սթէրլին | 950 |
| Ֆրանսական 1000 Ֆրանք | 900 |
| Զուիցերիական Ֆրանք | 82,00 |
| Պելճիքական Ֆրանք | 6,50 |
| Եգիպտական | 850 |
| Յորդանանեան | 930 |
| Տինար | 950 |
| Թրքական | 67,50 |
| Լիբանանեան | 109,00 |

ՈՍԿԵԴՐԱՄ

| | |
|---|---|
| Անգլիական | 36,10 |
| Օսմ. Րէշատի | 31,10 |
| Օսմ. Թիւնարի | 28,00 |


ՍՏԱՑԱՆՔ

ԹԱՓԱՌԱԿԱՆ ՀԱՅԸ
ՎԷՊԻՆ ՆՈՐ ՊՐԱԿՆԵՐԸ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
ՏՊԱՐԱՆ ՏՕՆԻԿԵԱՆԻ
ՊԷՅՐՈՒԹ

[illegible] օրաթերթի Հալէպի ցուցիչ Պ. Աբրահամ Մուրատեանին:

Յաջորդ պրակները կը հասնին ամէն շաբաթ կանոնաւորաբար։

ՏՊԱՐԱՆ «ՆԱՅԻՐԻ»
ՀՈՎԵՏՈՒՆ - ՀԱԼԷՊ

ԾԽԵՑԷ՛Ք
ՌԷԺԻԻ ՍԻԿԱՐԷԹՆԵՐԸ